



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-28-77

թիվ _____

« _____ » _____ 2013 թ.

«Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի
գործադիր տնօրեն Վարուժան Հոկտանյանին

Ձեր 10.07.2013թ. թիվ 13/36/17 գրությանը՝

Հարգելի պարոն Հոկտանյան

Ի կատարումն «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագրով» իրականացված ծրագրերի՝

1. Լոռու մարզի բժշկական հաստատություններում երեխայի առողջության պետական հավաստագրի համակարգի, համավճարային մեխանիզմների համակարգի եւ շտապ բժշկական օգնության ծրագրերի ներդրումը դրական տեղաշարժ է առողջապահության բնագավառում: Վերոնշյալ ծրագրերի ներդրումը հնարավորություն է տվել բացառել ստվերային դրամաշրջանառությունը հիվանդ-բժիշկ փոխհարաբերություններում, բարձրացնել բժիշկների աշխատավարձերը մի քանի անգամ, կանխատեսելի եւ թափանցիկ դարձնել բուժհաստատություն մուտք արվող գումարները: Շտապ բժշկական օգնության նոր ծրագրի ներդրման շնորհիվ մարզի բուժհաստատությունների շտապ օգնության ծառայության բժշկական և հարբժշկական անձնակազմը վերապատրաստվեց, տրանսպորտային պարկը թարմացվեց 8 ժամանակակից հագեցած սանիտարական մեքենաներով և 1 ռեանիմոբիլով:

2. Հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի հրամանը, ՀՀ Լոռու մարզպետի կարգադրությամբ ստեղծվել են մոնիտորինգային խմբեր՝ բուժհաստատություններում բժշկական ծառայություններից բնակչության բավարարվածության գնահատման, ստվերային դրամաշրջանառության հայտնաբերման նպատակով:

3. Պետական պատվերի և բուժհաստատությունների գործունեության թափանցիկությունը, հասցեականությունը, հաշվետվողականությունը ապահովելու նպատակով, զանգվածային լրատվամիջոցներով՝ ելույթների, բուժհաստատություններում՝ պաստառների միջոցով

հնարավորինս լուսաբանվում է պետական պատվերի, համավճարի սկզբունքի, վճարովի ծառայության կարգը:

4. Կանոնակարգվում է վճարովի ծառայությունների դաշտը: Վճարովի ծառայությունների գները սահմանվում են մարզպետարանի կողմից և միտված են սովերային եկամուտների նվազեցմանը:

5. Դեղապահովումը բուժհաստատությունների կողմից կատարվում է հնարավորինս թափանցիկ: Դեղերի ձեռք բերումը բուժհաստատության կողմից կատարվում է համաձայն գնումների մասին օրենքի: Հիվանդանոցներում պետական պատվերի շրջանակներում բուժօգնություն ստացող հիվանդները դեղորայքը ամբողջ ծավալով ստանում են անվճար, բացառիկ դեպքերում հիվանդը դեղորայքը ձեռք է բերում անձնական միջոցներով՝ այդ մասին հիվանդության պատմության մեջ անձամբ ստորագրելով:

Ամբուլատոր-պոլիկլինիկական օդակում անվճար կամ արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղորայքը հիմնականում հիմնական դեղերի ցանկից է, խիստ անհրաժեշտության դեպքում՝ տրամադրվում է հանձնաժողովային կարգով:

6. Մարդասիրական օգնության շրջանակներում դեղերի ստացման պահպանման և բաշխման թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը ապահովելու նպատակով ՀՀ Լոռու մարզպետի կողմից ստեղծված է հանձնաժողով՝ պատշաճ վերահսկողություն իրականացնելու նպատակով:

7. Ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղերի անվտանգ ոչնչացման համար Լոռու մարզի բուժհաստատությունները պայմանագրային հիմունքներով աշխատում են Էջմիածնի՝ Ջինջ Էկո՝ ՄՊԸ-ի հետ:

8. Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատություններում խիստ հսկողություն է սահմանված ստացիոնար բուժհաստատություններ անհարկի ուղեգրումների բացառման, ինչպես նաև բուժհաստատությունների կողմից ձեռք բերվող ռեակտիվների, ժապավենների և այլ պարագաների սահմանաքանակների հաշվարկման, անվճար և արտոնյալ պայմաններով հատկացվող դեղորայքի բաշխման վրա:

9. Մտապես ուշադրության կենտրոնում է պահվել մարզպետարանի հակակոռուպցիոն հանձնաժողովի գործունեության, նիստերում քննարկվող հարցերի լուսաբանումն ու հանրությանն իրազեկումը մարզում գործող ՋԼՄ-ների միջոցով: Հակակոռուպցիոն հանձնաժողովի նիստերում քննարկվող հարցերի կարևորությունից ելնելով, ապահովվել է ՋԼՄ ներկայացուցիչների ներկայությունը:

ՄԱՐԶՊԵՏ



Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ